

Արարատ Մ. Հակոբյան  
Պատմ. գիտ. դոկտոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԸ\*

**Բանալի բառեր** – Սահմանադրություն, պառլամենտ, Շ. Շահամիրյան, կառավարություն, խմբակցություն, ընդդիմություն, ռամկավար հանրապետություն, Հ. Քաջազնունի, Ա. Սահակյան, աշխատակարգ, Հայաստանի խորհուրդ, համամասնական ընտրակարգ, օրենսդիր և գործադիր մարմին, Բյուրո-կառավարություն:

### Մուտք

ՀՀ սահմանադրական փոփոխությունների հետ կապված՝ անհրաժեշտություն է առաջացել քննական հայացք նետել մեր անկախության արշալույսին, երբ հայ ժողովուրդն ու նրա ճակատագիրը տնօրինող ՀՅ Դաշնակցությունը Հայաստանի առաջին Հանրապետության երկու գումարման խորհրդարանների միջոցով որդեգրեցին պառլամենտական կառավարման համակարգը (մոդելը): Այդ համակարգի արմատավորման անհրաժեշտությունը հասկանալու, նրա դրական ու բացասական կողմերը բացահայտելու, հայ ժողովրդի մտածելակերպին ու հոգեկերտվածքին համապատասխանության աստիճանը որոշելու համար հարկ է հանգամանորեն անդրադառնալ Առաջին Հանրապետության պատմական փորձին:

Ինչպես հայտնի է, հայ իրականության մեջ խորհրդարանական կառավարման գաղափարը առաջին անգամ արծարծվել է 18-րդ դարում՝ Անգլիայի գերիշխանության տակ գտնվող Հնդկաստանում, հայ հայրենասերների՝ Մադրասի խմբակի կազմած «Ռոզայթ փառաց» գրքում: Նրանում առաջ էր քաշվում ազատագրված Հայաստանում հանրապետական-պառլամենտական կարգեր հաստատելու խնդիրը: Անկախ Հայաստանի բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ խորհրդարանը, կոչվելու էր «Տունն Հայոց»: Խորհրդարանն ինքնին ենթադրում է օրենք և օրինականություն,

\*Հոդվածի ամբողջական տարբերակը լույս է տեսնելու 2015 թ. դեկտեմբերի 9-10-ին ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայում կայացած «ՀՅ Դաշնակցությունը և Հայոց պետականությունը» գիտաժողովի նյութերում: Ընդունվել է տպագրության 11.12. 2015:

ուստի «Որոգայթ փառաց»-ի հեղինակ Շահամիր Շահամիրյանը հայ ժողովրդի փրկությունն ու երջանկությունը, անկախությունից զատ, տեսնում էր նաև ռամկավարական հանրապետության, օրենքի գերակայության ու խորհրդարանական կառավարման համակարգի մեջ: Սահմանադրության նշանակություն ունեցող այդ փաստաթղթում հսկայական դեր էր տրվում օրենքի գերակայությանը. «Օրէնք մեր եղիցին տէր և թագավոր մեր»<sup>1</sup>: Ըստ Շահամիրյանի՝ ապագա ազատագրված (անկախ) Հայաստանը պետք է դառնար ռամկավարական հանրապետություն, որտեղ ժողովուրդն էր լինելու երկրի բարձրագույն տերը և իշխանության աղբյուրը: Նա էր օրենքներ տալիս և կառավարում երկիրը՝ հանձին իր ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի՝ «Հայոց տան»: Վերջինս լինելու էր միապալատանի՝ կազմված մոտ 517 պատգամավորներից: «Հայոց տուն»-ը ոչ միայն երկրի բարձրագույն օրենսդիր մարմինն էր, այլև բովանդակ իշխանության կրողը: Նրանից էին բխելու և՛ վարչական, և՛ դատական, և՛ զինվորական իշխանությունները: Ըստ «Որոգայթ»-ի հեղինակի՝ «Հայոց տան» օրենքներն ու կարգադրությունները պարտադիր էին լինելու բոլորի համար, և ոչ ոք, ոչ մի գործադիր, դատական իշխանություն կամ անձնավորություն չէր կարող դեմ գնալ կամ չհնազանդվել «Հայոց տանը»<sup>2</sup>:

Գնահատելով ամերիկյան սահմանադրության ու Ֆրանսիական մեծ հեղափոխությանը հասակակից այս փաստաթղթի նշանակությունը՝ պետք է ասել, որ չնայած ապագա Հայաստանի կառավարման համար նախատեսված օրենքների այս հավաքածուն կտրված էր 18-րդ դարի վերջերի Հայաստանի կյանքից ու իրական պայմաններից, իսկ նրա որոշ թեզեր ու դրույթներ օտարածին ու վերացական էին, բայց իր ժամանակի համար նշանակալի երևույթ էր հայ իրավաբանական մտքի պատմության մեջ: Ուշագրավ է, որ հետագա ժամանակաշրջանի հայ իրավական միտքը օգտվել ու շարունակում է օգտվել «Որոգայթ փառաց» գրքի քաղաքական ու գաղափարական առանձին թեզերից ու դրույթներից:

Միակողմանի չլինելու համար միաժամանակ նշենք, որ տվյալ դարաշրջանի հայ քաղաքական գործիչների ծրագրերում եղել են նաև ապագա Հայաստանի միապետական կառավարման համակարգի կողմնակիցներ, ինչպես օրինակ՝ 18-րդ դարի վերջերին Հովսեփ արքեպիսկոպոս Արղության-Երկայնաբազուկի կազմած «Հյուսիսային ծրագիրը», նաև՝ Մխիթարյան հայրերի առաջադրած գաղափարները և այլն: Վերջիններիս մոտ նման մոտեցումների առկայությունը պայմանավորված էր իրենց ավանդական՝ պահպանողական մտածելակերպով, իսկ ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղությանի պարագայում՝ միապետական Ռուսաստանից անմիջական օգնություն ստանալու քաղաքական ակնկալիքով:

Արդեն 19-րդ դարում հայ իրականության մեջ սահմանադրական-խորհրդարանական համակարգի առաջին նախադեպ կարելի է համարել 1860 թ. Արևմտահայերի **Ազգային Սահմանադրությունը**: Հայ իրականության մեջ առաջին անգամ էր, որ գումարվեց դարձյալ Եվրոպայից ներմուծված և յուրովի խորհրդարան հիշեցնող՝ արևմտահայ համայնքի ազգային գործերով

1 «Որոգայթ փառաց», Մադրաս, 1773, էջ 89:

2 «Հայրենիք», Պոսթրն, 1927, N 8, էջ 133:

ու ներքին խնդիրներով զբաղվող Ազգային ժողովն իր ընտրված 140 պատգամավորներով (երեսփոխաններով): Ակներն է, որ Ազգային Սահմանադրության հեղինակները (Ն. Ռուսինյան, Գ. Օսյան, Ն. Պալյան և ուրիշներ) քաջ ծանոթ են եղել «Որոգայթ փառաց»-ին: Որքան էլ Ազգային Սահմանադրությունը անվանենք ոչ լիարժեք, արևմտահայերի ներքին կյանքը, ազգային, կրոնական, կրթամշակութային և այլ գործերը կանոնակարգող մի կանոնադրություն, այդուհանդերձ իր ժամանակի ու պայմանների համար սա նոր երևույթ էր՝ հայ քաղաքական մտքի ուշագրավ թռիչք: Ուստի Ազգային Սահմանադրությունը պետք է դիտել որպես արևմտահայերի ազգային-մշակութային ինքնավարության մի յուրօրինակ դրսևորում: Նրանց կրթամշակութային կյանքի զարգացման՝ Ազգային Սահմանադրության ընձեռած հնարավորություններն, ինչ խոսք, խթանեցին «հայ **ազգային ինքնագիտակցութիւնը**, որ նախերգանք էր ազատագրական շարժումի»<sup>3</sup>: Արդարև, կարելի է ասել, որ արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը շոշափելի հետք թողեց հայ մտքի զարգացման, ազգային ինքնագիտակցության աճի ու ժողովրդավարական-պառլամենտական գաղափարների արմատավորման գործում: Նման արտաքին ու ներքին ազդակների միջոցով հայ մարդն աստիճանաբար հաղորդակից էր դառնում պառլամենտարիզմի արժեքներին:

Բայց միայն 20-րդ դարի սկզբներին՝ հայ ժողովրդի պատմության ամենադժվարին փուլում, 1918 թ. գործադրված գերմարդկային ձիգերով անկախ պետականության հռչակումով, հիմքեր ստեղծվեցին գործնականում իրականացնելու դարուկես առաջ Մադրասի խմբակի ծրագրած՝ **հանրապետական Հայաստանում** խորհրդարան ունենալու և խորհրդարանական կառավարման անցնելու գաղափարը:

## 1. Հայաստանի խորհրդի ձևավորումը

Հայաստանի անկախացման գործընթացի և երկրում խորհրդարանական կառավարման ձևի սկզբնավորման մասին ըստ էության կարելի է խոսել՝ սկսած 1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակի օրերից: Ցարական ինքնակալության տապալումից հետո երկրի ժողովրդավարական-հանրապետական կառավարման ուղին որդեգրեցին Ռուսաստանի առաջադեմ ուժերը՝ կադետները, էսէռները, մենշևիկները և այլն, ովքեր փորձեցին ցարական ինքնակալության փլատակների վրա հռչակել Ռուսաստանի դեմոկրատական հանրապետություն (1917 թ. սեպտեմբեր)՝ իր Սահմանադիր ժողովով (1918 թ. հունվար): Սակայն նրանք ձախողվեցին, որովհետև 1917 թ. հոկտեմբերին իշխանությունը բռնազավթած բոլշևիկները երկիրը տարան ոչ ժողովրդավարական ուղիով և տևականորեն հաջողեցին այդ գործում: Բանն այն է, որ ցարական բռնապետություն՝ ինքնակալական-ձորտատիրական համակարգ տեսած ու նրան վարժված ռուս ժողովուրդը փաստորեն նախընտրեց բռնապետական-կայսերապաշտական բնորդի փոխակերպումը (տրանսֆորմացիան) հանդիսացող բոլշևիկյան ամբող-

3 Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմություն, հատ. 1, Փարիզ, 1932, էջ 18:

ջատիրական (տոտալիտար) վարչակարգը:

Դրան հակառակ՝ զարգացման բոլորովին այլ ուղի որդեգրեցին անկախության գաղափարին կառչած՝ նախկին Ռուսաստանյան կայսրության առանձին ազգային շրջանները, այդ թվում՝ Անդրկովկասն ու Հայաստանը: Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդները՝ հայերը, վրացիները և կովկասյան թուրքերը, հանձինս Անդրկովկասյան կոմիսարիատի (կառավարության) ու Սեյմի (պառլամենտի), նախընտրեցին հանրապետական կառավարումը՝ պառլամենտական իշխանության գերակայությամբ:

Հարց է ծագում. ինչ նախադրյալներ կային նորանկախ Հայաստանում խորհրդարանական կառավարմանն անցնելու համար: Ամենից առաջ խորհրդարանական գործունեության առաջնային նախապայմանը քաղաքական կուսակցությունների առկայությունն է: Այդ ժամանակ Հայաստանում և հայ իրականության մեջ գործում էին ազգային, սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական յոթից ութ կուսակցություններ, որոնց անվիճելի առաջատարը Հայ Յեղափոխական Դաշնակցությունն էր: Նրա շարքերում, ոչ լրիվ տվյալներով, հաշվում էր 160-165 հազար մարդ<sup>4</sup>: Հասկանալի է, որ ցարական վարչակարգում ապրած հասարակությունը ծանոթ չէր պառլամենտարիզմի սկզբունքներին ու արժեքներին և դրանք պետք է յուրացնե՞ր ընթացք: Բայց, դրա հետ մեկտեղ, 20-րդ դարասկզբին հայ քաղաքական մի շարք գործիչներ պետական կառավարման աշխատանքի որոշակի փորձ էին կուտակել Ռուսաստանի Պետական դումաներում և Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի, Հայոց Ազգային խորհրդի մարմիններում աշխատելու ընթացքում:

Հայաստանի անկախության հռչակումից հետո ստեղծված արտակարգ ծանր պայմաններում ՀՅԴ-ն ստիպված միայնակ ստանձնեց երկրի ու ժողովրդի առաջ ողջ պատասխանատվությունը: Արտակարգ հանգամանքների թելադրանքով որոշվեց Հայոց (կենտրոնական) Ազգային խորհրդի հիմքի վրա կազմել ՀՀ գերագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, որը կոչվեց **Հայաստանի խորհուրդ**: Այն ձևավորվեց Հայոց Ազգային խորհրդում չորս կուսակցությունների՝ ՀՅԴ, ՀԺԿ, Սոց.-Դեմ. և ԷսէՊ խմբակցությունների ներկայացուցիչների թվի համամասնական սկզբունքով եռապատկման միջոցով: Արդյունքում՝ ստեղծվեց 46 հոգուց կազմված Հայաստանի առաջին խորհրդարանը: Նկատենք, որ այս նույն սկզբունքը կիրառվել էր Անդրկովկասյան Սեյմի, ինչպես նաև Վրաստանի ու Ադրբեջանի անդրանիկ խորհրդարանների ձևավորման ժամանակ: Հարկ է փաստել, որ Հայաստանի խորհրդում (խորհրդարանում) որևէ կուսակցություն չունե՞ր ձայների բացարձակ մեծամասնություն:

4 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1457, ց. 1, գ. 237, գ. 55-58; «Политические партии России: история и современность», под. ред. А. И. Завелева и др., М., 2000, с. 275 и 291. Տե՛ս նաև՝ «Кавказ», Тифлис, 1917, N 140, «Մշակ», Թիֆլիս, 27 հունիսի 1917 թ. :

## 2. Խորհրդի կառուցվածքը և առաջին քայլերը

Ըստ Հայաստանի խորհրդի ընդունած աշխատակարգի՝ **ռեզլամենտի**, անցկացվեցին ղեկավար կազմի ընտրություններ: Խորհրդի նախագահ ընտրվեց Ա. Սահակյանը (ՀՅԴ), երկու փոխնախագահներ՝ Գրիգոր Տեր-Խաչատրյանը (ՀԺԿ) և Դավիթ Զուբյանը (Էսէռ), իսկ քարտուղար՝ անկուսակցական Պետրոս Զաքարյանը: Ինչ վերաբերում է մշտական հանձնաժողովների ձևավորմանը, ապա աշխատակարգով սահմանված բոլոր 14 հանձնաժողովներում հիմնականում ապահովված է եղել խորհրդարանի բոլոր կուսակցությունների ու ազգային փոքրամասնությունների ներկայացուցչների մասնակցությունը:

Հատուկ ընդգծենք, որ ի սկզբանե նորահռչակ հանրապետությունը որդեգրեց **խորհրդարանի գերակայությամբ կառավարման սկզբունքը**: 1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում Հայաստանի խորհրդի պաշտոնական բացման ժամանակ տարիքով ավագագույն անդամ Ավետիք Սահակյանն իր բացման խոսքում ընդգծեց այն միտքը, որ խորհուրդը հանդիսանալու է **ՀՀ պետական իշխանության գերագույն իրավասու մարմինը**: Նա ունենալու է ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմնի, այլև առանձին ղեկաբերում՝ գործադիր իշխանության իրավասություններ<sup>5</sup>: Հայաստանի խորհուրդն ուներ խորհրդարանների համար անսովոր, այսպես կոչված՝ «**Կարգադրիչ**» հանձնաժողով, որով փաստորեն իրականացվում էին կառավարչական բնույթի գործառնություններ: Այսինքն՝ Հայաստանի խորհուրդը ներկայանում էր ոչ միայն որպես բարձրագույն օրենսդիր մարմին, այլև ուներ գործադիր իշխանության իրավասություններ: «Մեր երիտասարդ պառլամենտը, նկատում է ՀԺԿ պաշտոնաթերթը «Ժողովուրդ»-ը, հենց սկզբից սկսեց միտում ցույց տալ վերցնել իր վրա գործադիր իշխանության ֆունկցիաներ»<sup>6</sup>: Չնայած այն բանին, որ արդարադատության նախարար Ս. Հարությունյանը (ՀԺԿ) գտնում էր, որ դատական աստիճանների բարձր պաշտոնյաներին պետք է նշանակի գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, բայց և այնպես Հայաստանի խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշում է դատավորների ընտրության իրավունքը տալ խորհրդարանին<sup>7</sup>: Դատապարտյալներին ներում չնորհելու կամ նրանց պատիժը մեղմացնելու իրավունքը ևս վերապահվեց խորհրդարանին<sup>8</sup>: Նա հաճախ օրենքների անվան տակ իրապարակում էր վարչական իրահանգներ, կարգադրություններ և այլն:

Խոսելով Խորհրդի օրինաստեղծ աշխատանքի մասին՝ հարկ է նշել, որ հանրապետության պետական և հասարակական կյանքը բնականոն հունի մեջ դնելու համար ընդունվեցին բազում օրենքներ, իրավական ակտեր, որոշումներ: Դրա հետ մեկտեղ 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը ժամանակավորապես ուժի մեջ թողեց նախկինում գործող ուսական դատաիրավական բնույթի օրենքները՝ որոշ փոփոխություններով

5 Տե՛ս **Հակոբյան Ա. Մ.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Եր., 2005, էջ 53:

6 «Ժողովուրդ», Եր., 3 սեպտեմբերի 1918 թ.:

7 Տե՛ս «Ժողովուրդ», Եր., 18 դեկտեմբերի 1918 թ.:

8 Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Եր., 1919, էջ 57-58:

ու լրացումներով<sup>9</sup>: Սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում քաղաքականություն իրականացնելիս կառավարությունը, բնականաբար, ղեկավարվում էր Խորհրդի ընդունած օրենքներով ու որոշումներով: Խորհրդարան-կառավարություն հարաբերությունների առաջին փուլում խորհրդարանի գերակայությունը երևում էր նաև նրանով, որ նա, հաճախ չգոհանալով տվյալ ոլորտի նախարարության կամ գերատեսչության տված բացատրություններով ու պարզաբանումներով, ստեղծում էր ժամանակավոր քննիչ հանձնաժողով և արտակարգ լիազորություններով գործողում տվյալ վայր՝ խնդիրը տեղում քննելու և համապատասխան վճիռ կայացնելու: Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի խորհուրդը, բացի իրեն բնորոշ օրենսդիր մարմնի գործառույթներից, հանգամանքների բերումով իրականացրել է նաև գործադիր մարմնին բնորոշ գործողություններ: Նույնը կարելի է ասել դատաիրավական ոլորտի վերաբերյալ: Դատական իշխանության չկայացածության պայմաններում խորհուրդը հաճախ ընդունել է նաև դատաիրավական բնույթի որոշումներ: Կնշանակի՝ ՀՀ իշխանության մարմինների ձևավորման փուլում ընդգծվում էր խորհրդարանի գերակա դերը պետական կառավարման համակարգում, և դեռևս խոսք էր կարող լինել իշխանության երեք թևերի հստակ սահմանազատման մասին:

Խորհրդարանի գերակայությունն ընդգծվում էր նաև այն բանում, որ նա ընտրում էր պետական վերահսկողությունն իրականացնող մարմին՝ թիվ մեկ պետական վերահսկիչի գլխավորությամբ: Շուրջ 100 աշխատողներից կազմված Պետական վերահսկիչ մարմինը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության (Ֆինանսական, տնտեսական, շինարարական և այլ) գործունեության վրա վերահսկողության իրականացման գործուն լծակներից մեկն էր: Ուշագրավ է, որ ՀՀ ներկայիս Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի նախատիպը համարվող այս մարմինը ևս վերահսկում էր հարկային և ֆինանսական հարցերը, բացահայտում էր պետական գեղծումները, պաշտոնեական չարաշահումները, կոռուպցիան և այլն: Ընդամին, Պետական վերահսկիչը ենթակա ու հաշվետու էր միայն խորհրդարանի առաջ և կառավարությունից որևէ կախում չուներ:

Այսպիսով՝ Հայաստանի խորհրդարանը ձևավորման պահին իր մեջ բովանդակում էր երկրի գերագույն իշխանությունը: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ենթակա էր խորհրդարանին: Խորհրդարանը ոչ միայն ընտրում էր կառավարությանը, այլև Պետական վերահսկիչի միջոցով վերահսկում էր նրա ֆինանսատնտեսական գործունեությունը: Այսինքն՝ կարելի է ասել, որ սկզբնական փուլում Հայաստանը պառլամենտական կառավարման գերակայությամբ հանրապետություն էր:

### 3. Կուսակցական խմբակցությունները

Հայաստանի խորհրդում պաշտոնապես գործում էր չորս կուսակցական խմբակցություն, որոնք, ըստ իրենց քաղաքական դավանանքի և հետապնդած ծրագրային նպատակների, ներկայացնում էին քաղաքական դաշ-

<sup>9</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 15: «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս I, եր., 1919, էջ 22: «Կայծ», եր., 26 դեկտեմբերի 1918 թ.:

տի երեք հիմնական ուղղությունները՝ «աջ», «կենտրոն» և «ձախ»: Խորհրդարանում և նրանից դուրս աջ կամ աջակողմյան ազգային-ազատական կուսակցությունը Հայ Ժողովրդական կուսակցությունն էր (ՀԺԿ), որը հիմնվել է 1917 թ. ապրիլին Թիֆլիսում: Քաղաքական դաշտում կենտրոնական կամ ավելի հաճախ՝ ձախակենտրոն դիրք էր գրավում ՀՅԴ-ն: Վերջինս լինելով կառավարող կուսակցություն և ՀՀ առաջին խորհրդարանում (Խորհրդում) ունենալով հարաբերական մեծամասնություն, համարվում էր անկախ պետականության գաղափարի կրողը և հայ քաղաքական կյանքին հիմնական տոն տվողը: ՀՅԴ-ն տուրք չէր տալիս ձախ ծայրահեղականությանը, դավանում էր սեփականության բազմաձևության, տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերի, բնակչության սոցիալական պաշտպանվածության սկզբունքները և այլն: Ուստի պատահական չէ, որ շատ լայն էր այս կուսակցության սոցիալական հենարանը՝ սկսած բանվորից ու գյուղացուց, ավարտած մտավորականով և ունևոր դասով:

Խորհրդարանում և նրանից դուրս քաղաքական դաշտի ձախ թեր զբաղեցնում էին էսեռները (սոցիալիստ-հեղափոխականները) և սոցիալ-դեմոկրատները (մենշևիկ և բոլշևիկ): Սրանք ձախ-ծայրահեղական դիրքերից քննադատում էին կառավարության վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, վարում էին հակաանկախական գիծ և ներկայանում էին որպես ռուսական էսեռների և սոցիալ-դեմոկրատների հայկական հատվածներ: Զախակողմյան կուսակցությունները Հայաստանում չունեին բավականաչափ կշիռ և սոցիալական հենարան, նրանց դավանած գաղափարները չէին բխում հայ իրականությունից, օտարածին էին: Զախակողմյան կուսակցությունների խմբակցությունները թե՛ խորհրդարանում և թե՛ նրանից դուրս վարում էին բացահայտ հակաանկախական գիծ, դավում էին Հայոց պետականությանը և ցանկանում էին Հայաստանը «օր առաջ իր իսկական տիրոջը՝ Ռուսաստանին վերադարձնել»<sup>10</sup>: Բացի խորհրդարանական կուսակցություններից՝ հանրապետությունում գործում էին նաև արտախորհրդարանական կուսակցություններ, որոնցից թերևս, առավել ազդեցիկ էին Հայ Սահմանադիր-ռամկավարները, այն էլ՝ արևմտահայ գաղթականության շրջանում:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքական դաշտում (խորհրդարանում և նրանից դուրս) գործում էին ազգային և դասակարգային ուղղվածության կուսակցություններ, որոնք ունեին հստակ ծրագիր ու գործելակերպ, որոշակի քաղաքական կենսագրություն և ավելի կամ պակաս չափով ճանաչելի էին հայ հանրությանը: Նշվածներից առավել հարուստ փորձ կուտակածն ու ամենաազդեցիկը ՀՅԴ-ն էր, որն էլ իրավացիորեն հանդիսանում էր ՀՀ կառավարող կուսակցությունը և խորհրդարանում հիմնական դերակատարը:

<sup>10</sup> «Աշխատանք», Եր., 17 մայիսի, 1919 թ.:

## 4. Կոալիցիայի խնդիրը

ՀՀ խորհրդարանական կառավարման փորձի դրսևորումներից էր քաղաքական կոալիցիաների ստեղծումը: Այն բանից հետո, երբ 1918 թ. աշնանը իրադրությունը Հայաստանում և տարածաշրջանում էապես փոխվեց, և ակնհայտ դարձավ Թուրքիայի պարտությունը Առաջին աշխարհամարտում, ՀԺԿ-ն հանդես բերեց լավատեսություն և ցանկություն հայտնեց ՀՅԴ-ի հետ կիսել պատասխանատվությունը ժողովրդի ու պետության առջև և կազմել կոալիցիոն կառավարություն: ՀՅԴ-ն ընդառաջ գնաց այդ առաջարկին, որովհետև խորհրդարանում չունեի պատգամավորական կայուն մեծամասնություն, որպեսզի զբաղվեր արդյունավետ օրինաստեղծ աշխատանքով և երկիրը դուրս բերեր վարչապետ Հովի. Քաջազունու բնորոշած՝ «անձև քառս և ավերակների կույտ» վիճակից:

Կոալիցիայի հանգուցալուծումը տեղի ունեցավ 1918 թ. նոյեմբերի սկզբին: Խորհրդարանը լսեց Քաջազունու կաբինետի հրաժարականի հարցը, ընդունեց հրաժարականը և հանձնարարեց նույն վարչապետին հավասար համամասնությամբ՝ 4 -ՀՅԴ, 4 -ՀԺԿ և 1 անկուսակցական, կազմել նոր կաբինետ:

ՀՀ կոալիցիոն կառավարությունը, այսպես թե այնպես, գործեց մինչև 1919 թ. հունիսը, չնայած որ չկար համերաշխություն ու համագործակցություն նրա աշխատանքներում: Ի տարբերություն կառավարության՝ համեմատաբար ավելի արդյունավետ էր համագործակցությունը ՀՅԴ և ՀԺԿ խմբակցությունների միջև: Աջակողմյան և ձախակենտրոն սոցիալ-տնտեսական պլատֆորմներ ու մոտեցումներ ունեցող այս կուսակցությունների համար ընդհանրականը ազգային անկախ պետականության, իսկ շուտով նաև՝ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարների նյութականացումն էր: Եվ նրանք, խորհրդարանում համատեղ հանդես էին գալիս այդ գաղափարների հակառակորդ «ձախերի»՝ էսէռների, բոլշևիկների ու մենշևիկների դեմ: Սոցիալիստական ՀՅԴ-ին և բուրժուական ՀԺԿ-ին միավորել էին առաջնային ազգային-քաղաքական հիմնավանդիկները: Հենց սա էլ հիմք հանդիսացավ նրանց ժամանակավոր համագործակցության համար: Սակայն շուտով գլուխ բարձրացրին միջկուսակցական, անձնական, հատվածական շահերը, ներքին ու արտաքին քաղաքականության հարցերում խմբակցությունների միջև ծագած հակասությունները, որոնք էլ 1919 թ. գարնանը կոալիցիայի փլուզման, ուստի և Հայաստանի խորհրդի լուծարման պատճառը դարձան: Մեր համոզմամբ՝ ոչ ընտրովի առաջին խորհրդարանը պետք է լուծարվեր, քանզի նրա պատգամավորների գրեթե կեսը գիտակցաբար, թե անգիտակցաբար, մերժում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը, էլ չէնք խոսում Միացյալ և Անկախ Հայաստանի մասին:



## 5. Հայաստանի Խորհրդի ձգնաժամը և լուծարումը

1919 թ. գարնանը, երբ ՀՀ քաղաքական դրությունը համեմատաբար կայունացել էր՝ ընթանում էր մեծախոստում Փարիզի խաղաղության կոնֆերանսը, նկատելիորեն ընդարձակվել էին ՀՀ սահմանները, ամերիկյան հայափրկիչ հացը մեղմել էր սովը և այլն, անհետաձգելի խնդիր դարձավ ընտրովի խորհրդարան ձևավորելու հարցը: Սակայն մինչ գործող խորհրդարանի լուծարումը, իբրև նախաքայլ, Խորհուրդը որոշում ընդունեց իր աշխատանքները մեկ ամսով՝ 1919 թ. ապրիլի 27-ից մինչև մայիսի 27-ը դադարեցնելու և դադարի միջոցին իր բոլոր իրավունքները կառավարությանը հանձնելու վերաբերյալ<sup>11</sup>: Դա նշանակում էր, որ կառավարությունը ստանձնում էր նաև օրենսդիր մարմնի գործառույթներ. ի դեպ, այդ մեկ ամսվա ընթացքում վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի գլխավորած կառավարությունը հաստատեց ու հրապարակեց 99 օրենք<sup>12</sup>: Ցավոք, Հայաստանի խորհրդի 1919 թ. ապրիլի 27-ի ընդունած մեկամսյա արձակուրդի մասին որոշումը պատմական դասի առումով վատ նախադեպ հանդիսացավ երկրորդ՝ ընտրովի խորհրդարանի համար: Որքան էլ պատճառաբանվի խորհրդարանի անգործությունը նրա՝ ժողովրդի կողմից անմիջականորեն ընտրված չլինելու և այլ պատճառներով, սրանով փաստորեն կառավարությունը յուրացնում էր գործող օրենսդիր մարմնի լիազորությունները՝ նրան ուղարկելով արձակուրդի: Սա նշանակում էր, որ սովյալ ժամանակահատվածում ոչ միայն խոսք չէր կարող լինել երկրի խորհրդարանական կառավարման մասին, այլև խորհրդարանը վերածվել էր կառավարության կցորդի: Դա երևաց նաև նրանից, որ 1919 թ. մայիսի 26-ին և 27-ին նախարարների խորհուրդն ընդունեց քաղաքական նշանակության շատ կարևոր երկու օրենքներ՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և նրանից բխող՝ «Հայաստանի խորհրդի համալրման մասին», այն դեպքում, երբ ապրիլի 27-ին խորհրդարանի ընդունած օրինագծով հանձնարարված էր կառավարությանը արտակարգ կարևորության դեպքում հրավիրել խորհրդի արտակարգ նիստ: Մինչդեռ այդ երկու օրենքները համազգային կարևորության փաստաթղթեր էին, որոնք, սակայն, ընդունվեցին առանց խորհրդարանի գիտության ու մասնակցության: Եթե խորհրդարանը հարկադիր արձակուրդ ուղարկելու մասին ապրիլի 27-ի օրինագիծն ընդունել էին կայուն մեծամասնություն կազմող ՀՅԴ և ՀԺԿ խմբակցությունները համատեղ, ապա արդեն մայիսի 26-ի և 27-ի հայտնի օրենքները ընդունվեցին կառավարության ՀԺԿ ոչ բոլոր անդամների մասնակցությամբ<sup>13</sup>: ՀԺԿ առարկություններից մեկն այն էր, որ Հայաստանի գործող կառավարությունը իրեն հայտարարում է «Միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն»<sup>14</sup>: Խնդիրն այն է, որ Հայ ժողովրդականներն իրենց գաղափարակից Սահմանադիր-ճամկավարների հետ միասին ցանկանում էին ապագա Միացյալ Հայաստանի կառավարության ղեկին տեսնել Ազգային

11 Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս I, Եր., 1919, էջ 61:

12 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 88:

13 Տե՛ս «Բանքեր Հայաստանի արխիվների», Եր., 2002, N 1, էջ 94:

14 ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 56, թ. 15, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 10:

պատվիրակության ղեկավար, ռամկավար գործիչ, եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուպար փաշային, որն, ի դեպ, 1918 թ. դեկտեմբերին թղթի վրա նույնիսկ կազմել էր Միացյալ Հայաստանի սովերային կառավարություն՝ Գ. Նորատունկյան, Ո. Մարտիկյան, Ա. Չոպանյան և այլոց կազմով<sup>15</sup>: Ժողովրդականների մյուս առարկությունն այն էր, որ կառավարության մայիսի 27-ին հաստատած օրենքով, որպես երկու Հայաստանների իրական միացման արտահայտություն, որոշվել էր Հայաստանի խորհրդի կազմը, իբրև լիիրավ անդամներ, համալրել արևմտահայ գործադիր մարմնի 12 ներկայացուցիչներով<sup>16</sup>, որոնք, ըստ կուսակցական պատկանելության, դաշնակցական էին կամ նրանց հարողներ: Հարկ է նկատել, որ 12 արևմտահայ ներկայացուցիչների մուտքը խորհրդարան ՀՅԴ-ի համար ապահովում էր կայուն մեծամասնություն, որն էլ բուռն վրդովմունք էր առաջ բերում ոչ միայն ՀԺԿ-ի, այլև ընդդիմության շրջանում: Նման իրավիճակում այլ ելք չէր մնում, քան լուծել կոալիցիան, լուծարել խորհրդարանը և նշանակել օրինական ընտրություններ:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ իր պետական կառուցվածքով ՀՀ-ն պառլամենտական հանրապետություն էր՝ խորհրդարանի գերակայությամբ: Բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ընտրվում ու հաստատվում էր խորհրդարանի կողմից և հաշվետու էր նրա առաջ: Դատական իշխանության մարմինները ևս հիմնականում ձևավորվում էին խորհրդարանի կողմից: Սակայն եթե Խորհրդի տասնամյա գործունեության առաջին փուլերում նրա իրավասությունները շատ մեծ ու լայն էին, ապա 1919 թ. գարնանը վերջինիս դերակատարությունը կտրուկ սահմանափակվեց: Խորհուրդն ուղարկվեց հարկադիր արձակուրդի, նրա իրավունքները ժամանակավորապես յուրացրեց կառավարությունը՝ խորհրդարանում առաջ բերելով լուրջ ընդդիմություն ու ներքին ճգնաժամ, ինչի արդյունքում այն ի վերջո լուծարվեց:

## 6. Ընտրական համակարգը և երկրորդ գումարման խորհրդարանը

1919 թ. մարտի 31-ին Հայաստանի խորհուրդը հաստատեց կառավարություն ներկայացրած օրինագիծը «ՀՀ պառլամենտի ընտրությունների մասին»՝ բաղկացած 10 գլուխներից և 111 հոդվածներից<sup>17</sup>: Ընտրություններն անցկացվում էին եվրոպական ժողովրդավարական ընտրական համակարգի վրա կառուցված չափանիշներով՝ ընդհանուր, ուղղակի, հավասար, համեմատական ներկայացուցչության սկզբունքով և գաղտնի քվեարկության միջոցով՝ առանց ազգի, սեռի ու կրոնի խտրության: Ընտրելու իրավունք ունեին 20 տարին լրացած երկու սեռի քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ-ում առկա արևմտահայ գաղթականները առանց որևէ սահմանափակման: Ընտրությունների յուրահատկություններից մեկն այն էր, որ իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները ընտրություններին մասնակ-

15 Տե՛ս «Արձագանք», Եկատերինոդար, 10 հունվարի, 1919 թ.:

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 114:

17 Տե՛ս ՀԱԱ, 404, ց. 1, գ. 62, թ. 1-14:

ցելու իրավունք չունենին: Դա արվում էր բանական ապակուսակցականացնելու և զինվորականներին քաղաքական պայքարից հեռու պահելու նպատակով:

Հայաստանի խորհրդարանի ընտրություններն անցկացվելու էին **համամասնական** ընտրակարգով՝ ըստ կուսակցական ցուցակների: Ընդ որում, քվեարկության համար առանձին ցուցակ կարող էին ներկայացնել նաև տարբեր հասարակական կազմակերպությունները կամ էթնիկ միավորները, որով ավելի էր ընդգծվում վերջիններիս իրավահավասարությունը: Այդ իսկ պատճառով ընտրություններին ներկայացված ընդամենը 7-ը համամասնական ցուցակներից 3-ը՝ ՀՅԴ, ՀԺԿ, ԷսէՆ, կուսակցական էին, 3-ը ազգային՝ քրդական, ասորական և թուրքական, և մեկն էլ՝ հասարակական-արտադրական՝ Արագածոտնի անկուսակցական գյուղացիական միությունը: Ինչպես տեսնում ենք, ընտրությունների մասին օրենքով **մեծամասնական** (մաժորիտար) ընտրակարգի մասին խոսք չկար:

Ցավոք, տարբեր պատճառաբանություններով խորհրդարանի ընտրությունները փորձեցին ձախողել (բոյկոտել) Սոցիալ-դեմոկրատ մենշևիկները և բոլշևիկները, Հայ ռամկավարները և որքան էլ ցավալի է, ՀԺԿ-ն, որը ՀՅԴ-ից հետո ՀՀ-ում երկրորդ ազդեցիկ կուսակցությունն էր: Որոշ տվյալներով նա կարող էր շահել մեկ տասնյակից ավելի պատգամավորական տեղ: Սակայն դրսի (Պողոս Նուպար փաշայի) ազդակներով, ինչպես նաև կուսակցության համամասնական ցուցակը կազմելու կապակցությամբ թիֆլիսյան և երևանյան հատվածների միջև ծագած վեճերի պատճառով ընտրությունների նախօրյակին՝ հունիսի 20-ին, ՀԺԿ-ականները քվեարկությունից հանեցին իրենց պատգամավորական թեկնածուների ցուցակը և նորընտիր խորհրդարանում փաստորեն մնացին առանց որևէ պատգամավորի<sup>18</sup>: Հետագայում նրանք զոջացին բոյկոտի մարտավարության համար: Դրա փոխարեն առանձնապես քաղաքական կշիռ չունեցող, հակաանկախական էսեռները կարողացան խորհրդարան անցկացնել 4 պատգամավոր:

Խորհրդարանի 1919 թ. հունիսյան ընտրությունների արդյունքով ընտրական օրենքով սահմանված ընդամենը 80 պատգամավորական տեղերից 72-ը զբաղեցրեց ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը, իսկ 8-ը՝ ընդդիմությունը: Հարկ է նշել, որ ընտրությունները կազմակերպողների և ընտրություններին մասնակցողների փորձի պակասի, տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից երբեմն վարչական լծակների օգտագործման, ժողովրդի սոցիալական ծանր պայմանների և այլնի հետևանքով թույլ են տրվել ընտրախախտումներ, անկանոնություններ, ընդհուպ առանձին դեպքերում՝ ընտրակաշառք: Սակայն, իր բացթողումներով հանդերձ, 1919 թ. խորհրդարանական ընտրությունները պետք է համարել պատմական նշանակության իրադարձություն հայ ժողովրդի հազարամյակների պատմության մեջ, երբ հայ մարդը առաջին անգամ ժամանակակից չափանիշներով պատգամավոր էր ընտրում իր սեփական պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնի համար:

Հասկանալի է, որ 8 հոգանոց ընդդիմությունը չէր կարող լուրջ հա-  
18 Տե՛ս «Կայծ», եր., 29 հունիսի, 1919 թ.: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս I, թ. 138:

կակշիռ լինել 72 պատգամավորանոց ՀՅԴ խմբակցությանը: Իհարկե, **ամեն մի խորհրդարանի հիմնական շարժիչ ուժը նրանում առկա ընդդիմությունն է:** Բայց պետք է ընդունել նաև այն իրողությունը, որ տվյալ խորհրդարանում նման պատկեր ստեղծվելու մեղավորը ոչ թե ՀՅԴ-ն էր, այլ հանրապետությունում գործող մյուս կուսակցությունները, ովքեր, ինչպես ասացինք, տարբեր պատճառաբանություններով, անգամ դրսից ցուցումներ ստանալով, չմասնակցեցին ընտրություններին: Կատարված փաստն այն էր, որ ընտրություններին փաստորեն մասնակցեցին ընդամենը երկու քաղաքական կուսակցություն՝ ՀՅԴ-ն և Հայ սոցիալիստ-հեղափոխականները (էսէռները), և արդյունքում ստեղծվեց նման պատկեր:

## 7. ՀՅԴ մենիշխանությունը կամ Բյուրո-կառավարությունը

Ընտրովի խորհրդարանում ՀՅԴ մենիշխանությունը երևաց նրանով, որ այս անգամ խորհրդարանի նախագահության կազմում ընդդիմությունից ոչ մի ներկայացուցիչ չընդգրկվեց: Ընդդիմության ներկայացուցիչներն ընդգրկված էին 12 մշտական հանձնաժողովներից ընդամենը 5-ում: Սակայն հարկ է ընդգծել, որ խորհրդարանական ընդդիմության թուլությունը մի տեսակ լրացվում էր ՀՅԴ խմբակցության ներսում տարբեր մոտեցումների, դիրքորոշումների ու հոսանքների առկայությամբ: Քանի որ խորհրդարանում ճնշող մեծամասնությամբ գերակշռում էր ՀՅԴ խմբակցությունը, հետևաբար կառավարությունը ձևավորվեց միայն այդ կուսակցությունից: Նորընտիր վարչապետ Ալ. Խատիսյանը պետական մոտեցման կողմնակից էր: Ի տարբերություն ՀՅԴ Բյուրոյի անդամներ Ռ. Տեր-Մինասյանի, Ա. Զամայանի և մյուսների՝ նա գտնում էր, որ կուսակցությունը չպետք է միջամտի կառավարության ընթացիկ գործերին: Բայց պետք է ասել, որ Խատիսյանը գործում էր շատ զգուշորեն և մեծ տակտով: Նա կուսակցության հանդեպ վարում էր խուսանավման, փափուկ քաղաքականություն: Արդյունքում՝ Խատիսյանը ձգտում էր հենվել ն՝ խորհրդարանի, ն՝ կուսակցության, ն՝ իշխանության ուժի վրա:

ՀՀ քաղաքական կյանքում նշանակալի իրադարձություն հանդիսացավ 1919 թ. աշնանը կայացած ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը, որը նոր իրողությունների պայմաններում կատարեց ծրագրային ու կանոնագրային մի շարք փոփոխություններ: Գլխավոր որոշումը Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականի ամրագրումն էր և ջանքերի կենտրոնացումը պետականության կերտման ու տնտեսության վերաշինության վրա<sup>19</sup>: Ընդհանուր ժողովում հաստատված կազմակերպական կանոններով «Բյուրոն վերահսկում էր միայն ՀՅԴ խորհրդարանական խմբակցությունը և կառավարության վրա կարող էր ազդել միայն խմբակցության միջոցով»<sup>20</sup>: Սահմանվեց կառավարության ձևավորման հետևյալ կարգը: Վարչապետի թեկնածությունը առաջադրելիս խորհրդարանական խմբակցությունը նախապես պետք է ստանար Բյուրոյի համաձայնությունը, իսկ նախարարներին նշանակելիս նախարարապետը ստանում էր միայն խմբակցության համա-

19 Այդ մասին հանգամանորեն տես Ա. Հակոբյան, Հ. Յ. Գ. 9-րդ Ընդհանուր ժողովը, Եր., 1994:  
20 ՀՅԴ կազմակերպական կանոններ, Եր., 1919, էջ 12:

ձայնությունը<sup>21</sup>: Բացի այդ, խմբակցությունն իր օրինաստեղծ աշխատանքում միանգամայն ինքնուրույն էր: Խորհրդարանի ՀՅԴ խմբակցությունը հանդիսանում էր մի տեսակ շարժափոկ Բյուրոյի և կառավարության միջև: ՀՅԴ-ն, առաջնորդվելով պառլամենտարիզմի սկզբունքներով, աշխատում էր, որպես կանոն, իր քաղաքականությունը անցկացնել տալ խորհրդարանական խմբակցության միջոցով: Իր հերթին, կառավարությունն իրեն պատասխանատու էր համարում միայն լայն առումով խորհրդարանի, իսկ նեղ իմաստով՝ ՀՅԴ խմբակցության առջև և նրա միջոցով միայն՝ Բյուրոյի: Այդպիսի ճկուն մեխանիզմով էին զուգորդվում ու կարգավորվում կառավարող կուսակցության և խորհրդարանի հետ կառավարության փոխհարաբերությունները հետհամագումարյան ժամանակաշրջանում՝ մինչև 1920 թ. Մայիսյան խռովությունը, երբ պատմաքաղաքական բարդ իրադրության թելադրանքով ՀՅԴ Բյուրոն ամբողջ կազմով ստանձնեց կառավարությունը<sup>22</sup>: Սա վտանգված հայրենիքն ու պետականությունը փրկելու հարկադիր քայլ էր:

Կուսակցության փոփոխված կանոնադրության էական սկզբունքներից մեկն էլ այն էր, որ, ի տարբերություն բոլշևիկյան կառավարման մենատիրական մեթոդի, «**Կառավարության դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցության որևէ մարմնի անդամ չեն կարող լինել**»<sup>23</sup>: Կանոնադրության ընդունման պահին Բյուրոյի 4 անդամներ պետական ծառայության մեջ էին, երկուսը՝ Ա. Գյուլխանդանյանը և Ս. Արարատյանը, նախարարներ էին, իսկ Հ. Օհանջանյանը և Ա. Գարոն ունեին արտաքին ոլորտի պետական բարձր պաշտոններ: Կնշանակի՝ նրանք կամ պետք է թողնեին իրենց պետական պաշտոնները, կամ էլ գրկվեին Բյուրոյի անդամությունից: Արդյունքում որոշվեց, որ կառավարության համակարգում գտնվող չորս բյուրոյականները դադարեցնեն գործուն մասնակցությունը Բյուրոյի աշխատանքներին<sup>24</sup>: Սակայն, ցավոք, 1920 թ. մայիսյան դեպքերի բերումով խախտվում է կանոնադրական այս դրույթը ևս, և ՀՅԴ Բյուրոն իր ամբողջ կազմով՝ 7 անդամ և 3 փոխանդամ, ստանձնում է ամբողջ կառավարությունը: Անշուշտ, կառավարման ձևի առումով սա որոշակի նահանջ էր ժողովրդավարական սկզբունքներից:

Իհարկե, պետք է հասկանալ, որ բոլշևիկների Մայիսյան ելույթների և մահմեդականների ուժգնացող խռովությունների պայմաններում, երբ Կարմիր բանակը մոտեցել էր Հայաստանի սահմաններին, դրան հետևել էր Ադրբեջանի հեղկոմի վերջնագիրը, և լուրջ սպառնալիք էր ստեղծվել անկախ պետականության գոյության համար, անհրաժեշտություն կար ուժեղացնել պետական իշխանությունը, նրան օժտել դիկտատորական իրավասություններով՝ ներգրավելով նաև իշխող կուսակցության կառույցները: Խորհրդարանի աշխատանքները դադարեցվեցին այն հիմնավորմամբ, որպեսզի պատգամավորները գործուղվեն գավառներ և տեղերում զբաղվեն բացատրական ու կազմակերպչական աշխատանքներով:

21 Տե՛ս նույն տեղում:

22 Տե՛ս Ա. Զակոբյան, Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, Եր., 1994, էջ 22-23:

23 Հ.Յ.Դ. կազմակերպական կանոններ, Եր., 1919, էջ 13:

24 Տե՛ս Ա. Զակոբյան, նշվ. աշխ., էջ 40:

Չնայած խորհրդարանի մայիսի 5-ի նիստում նորընտիր Բյուրո-կառավարության ղեկավար Հ. Օհանջանյանը խոստացել էր, որ երբ բոլշևիկյան խռովությունը հնազանդեցվի, և երկրի վիճակը քիչ թե շատ կայունանա, Բյուրոն կհեռանա կառավարությունից և կրկին կսահմանազատվեն Բյուրոյի ու կառավարության իրավասության շրջանակները, բայց այդ բանը տեղի չունեցավ: Մեկ ամիս անց՝ 1920 թ. հունիսի 5-ին, երբ գումարվեց խորհրդարանի արտահերթ նիստը, Բյուրո-կառավարությունը փաստարկեց, որ «դեռ անելիք կա ներքին ճակատի վրա»<sup>25</sup>: Ներքին ճակատ ասելով՝ կառավարությունը նկատի ուներ մահմեդականների պերմանենտ խռովությունները: Չնայած որոշ պատգամավորների դիմադրությանը՝ որոշվեց կրկին երկարաձգել խորհրդարանի արձակուրդը, և նրա իրավունքները կրկին փոխանցվեցին Բյուրո-կառավարությանը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ Բյուրո-կառավարության կառավարման վեց-յոթ ամիսներին խոսք չէր կարող լինել երկրի խորհրդարանական կառավարման մասին: Ավելին, խորհրդարանը փաստորեն մեկուսացած էր երկրի քաղաքական կյանքից և հաստատվել էր կուսակցական-մենիժխանական վարչակարգ: Ուստի տալով Բյուրո-կառավարության գնահատականը՝ Ս. Վրացյանը վկայում է, որ Օհանջանյանի կարիքները «...ավելի շուտ հեղափոխական կոմիտե էր, քան սովորական կառավարություն»<sup>26</sup>: Սա, անշուշտ, նահանջ էր ժողովրդավարական սկզբունքներից:

Այդ առնչությամբ, կարծում ենք, միանգամայն տեղին ու արդարացի էր 1921 թ. ապրիլին ՀՅԴ Բուխարեստի խորհրդաժողովում Բյուրոյի գործունեությանը տրված այն քննադատական գնահատականը, որ նա, «լինելով հանդերձ երկրի դե ֆակտո ամենահեղինակաւոր վարիչ մարմինը, թէ՛ կառավարութիւն դառնալէ առաջ և թէ՛ մանաւանդ յետոյ կանգնած չէ եղեր պատմական ծանր վայրկեանի բարձրութեան վրայ»:<sup>27</sup> «չէ աշխատած ստեղծելու կուսակցական ուժեղ կազմակերպութիւն», այլ «հակառակ կանոնադրի և IX-րդ Ընդհ. Ժողովի որոշման, մտաւ կառավարութեան մէջ՝ լքելով կազմակերպութեան շարքերը», «որ մայիսեան օրերուն... Բիւրօ-կառավարութիւնը չ'կրցաւ պատշաճ կերպով տանել այդ գործը, որի համար բացառապէս ստանձնած էր դիկտատորութիւն և շարժումը ճնշելէ յետոյ անմիջապէս չհրաժարվեցաւ իշխանութենէ»<sup>28</sup>: ՀՅԴ Բյուրոյի գործունեությանը գրեթե նույն քաղաքական գնահատականն է տրվել Փարիզում 11.1924 - 1.1925 թթ. գումարված կուսակցության 10-րդ (Ժ) Ընդհանուր ժողովում: Քննելով 9-րդ (Թ) Ընդհանուր ժողովից ի վեր ՀՅԴ Բյուրոյի հնգամյա գործունեությունը՝ ժողովը որպես թերություն ընդգծեց, որ ՀՅԴ Բյուրոն «Մայիսյան ապստամբության զսպումից հետո երկարաձգել է իր պետական իշխանության գլուխ մնալը»<sup>28</sup>: Ինչպես տեսնում ենք, կուսակցության ղեկավար մարմնի թույլ տված վրիպումների ու սխալների առաջին քննադատ-

25 «Ազդակ-Շաբաթօրեակ», Բէյրութ, 23 սեպտեմբերի 1973 թ., N 41:

26 Ս. Վրացյան, Հուշեր մոտիկ անցեալից, «Հայրենիք», Պոսթըն, 1923, N 1 (սոյնմբեր), էջ 63:

27 Հ. Տասնապետեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհ. Ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 159: «Ազդակ-Շաբաթօրեակ», Բէյրութ, 30 սեպտեմբերի 1973 թ., N 42, «Վէմ», Եր., 2010, N 4(32), էջ 208-209:

28 Հ. Տասնապետեան, նշվ. աշխ., էջ 173:

ները եղել են նրա բարձրագույն ժողովները՝ ՀՅԴ Բուխարեստի խորհրդա-  
ժողովը և ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովը:

## Որպես վերջաբան ու ամփոփում

Տեսական ու պերմանենտ արձակուրդներից հետո 1920 թ. նոյեմբերի 1-ից ՀՀ խորհրդարանը վերսկսեց իր աշխատանքները: Պատմաքաղաքա-  
կան առումով սա այն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանն արդեն  
հայտնվել էր «**ռուսական մուրճի և թուրքական սալի**» միջև. հոկտեմբերի  
30-ին ընկել էր Կարսը, օրերի հարց էր Ալեքսանդրապոլի գրավումը, և  
հանրապետությունը կանգնած էր կատարյալ պարտության շեմին: Ստեղծ-  
ված իրավիճակում Բյուրո-կառավարությունը, սխալներ ու ձախողումներ  
թույլ տալով ներքին և արտաքին ճակատներում, ստիպված էր հրաժարա-  
կան տալ: Խորհրդարանն իր նոյեմբերի 23-ի նիստում ընդունեց Բյուրո-  
կառավարության հրաժարականը: Քենալական Թուրքիայի և բոլշևիկյան  
Ռուսաստանի համակրանքը շահելու համար ստեղծվեց դաշնակցական-  
ներից և էսէռներից կազմված «ձախ» կոալիցիոն կառավարություն՝ Ս.  
Վրացյանի գլխավորությամբ: Սակայն նրան վիճակված չէր երկար կառա-  
վարել, որովհետև բոլշևիկյան Ռուսաստանը և քենալական Թուրքիան  
արդեն վճռել էին Հայաստանի ճակատագիրը:

Պատմագիտական գրականության մեջ և նույնիսկ մեր օրերի ՀՀ հա-  
սարակական-քաղաքական շրջանակներում, շարունակելով բոլշևիկյան  
ավանդույթը, ներբոլշևիկյան դիրքերից երբեմն զարգացվում է այն տեսա-  
կետը, թե իբր՝ «Այս կուսակցությունը (Դաշնակցությունը-Ա. Հ.) կործանել է  
Առաջին հանրապետությունը, ընդ որում՝ խորհրդարանական կառավար-  
ման համակարգի պայմաններում»<sup>29</sup>: Իրականում ՀՀ կառավարման մոդելը  
էական աղերս չի ունեցել նրա անկման հետ: Ավելին՝ 1920 թ. մայիսից  
խորհրդարանը գործնականում չէր աշխատում, և ամբողջ իշխանությունը  
(գործադիր և օրենսդիր) ստանձնել էր ՀՅԴ Բյուրո-կառավարությունը: Հա-  
յաստանի անկախության վերացումը պայմանավորված էր 1920 թ. գարնանը  
Խորհրդային Ռուսաստանի մուտքով դեպի Անդրկովկաս, որն էլ հերթա-  
կանությամբ կանխորոշեց թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի և թե՛ Վրաստա-  
նի անկախ պետականությունների վերացումը և խորհրդայնացումը: ՀՀ  
կառավարման համակարգն ինչպիսին էլ որ լիներ՝ պառլամենտական, նա-  
խագահական, թագավորական, թեոկրատական, թե մեկ այլ, մինևույն է,  
ուժերի տվյալ հարաբերակցության պայմաններում Հայաստանը դատա-  
պարտված էր խորտակման, ինչպես որ պատահեց Անդրկովկասյան մյուս  
հանրապետությունների հետ: Եթե «Առաջին Հանրապետությունը կործա-  
նեցին դաշնակցականները», ապա հարց է ծագում. իսկ ինչու՞ կործանվեցին  
մուսավաթական Ադրբեջանը և մենշևիկյան Վրաստանը: Դրա ճշմարիտ  
պատասխանը կարելի է գտնել նույնիսկ ներկայիս դպրոցական դասա-  
գրքերում: Բանն այն է, որ քաղաքացիական պատերազմում հաղթանակ

29 Տե՛ս ՀՀ Ազգային ժողովում ՀԱԿ խմբակցության ղեկավար Լ. Զուրաբյանի՝ 18.09.15 թ. ելույթը  
ՀՀ սահմանադրական փոփոխությունների կապակցությամբ: Տե՛ս «Հայկական ժամանակ», Եր., 19  
սեպտեմբերի 2015 թ., «Չորրորդ իշխանություն», Եր., 19 սեպտեմբերի, 2015 թ.:

տարած բոլշևիկյան կառավարությունը ռազմավարական խնդիր էր դրել նվաճել ու միավորել Ռուսաստանյան կայսրության նախկին տարածքները, իսկ հնարավորության դեպքում չէր բացառում համաշխարհային հեղափոխության կարգախոսներով հասնել նաև սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակին ամբողջ աշխարհում: Հայաստանի պարագայում այդ խնդիրը հաջողությամբ լուծվեց քենավա-բոլշևիկյան գործակցության ու դաշինքի շնորհիվ, որի արդյունքում բզկտվեցին ՀՀ տարածքները և բաժանվեցին միմյանց միջև: Անգիտության, անտեղյակության և կեղծիքի վրա կառուցված նման սադրիչ քարոզչությունն ու ապատեղեկատվությունը կարող է նոր կեղծիքներ ծնել, տեղիք տալ հասարակության մոլորեցմանն ու դեգրադացիային:

Ուստի ամփոփելով Հայաստանի առաջին Հանրապետության կառավարման համակարգի պատմական փորձն ու ստացած դասերը՝ կարելի է հանգել հետևյալ ընդհանրացումներին.

- ՀՀ պետաիրավական կառույցի անբաժան մասն է կազմել խորհրդարանը, որը ձևավորելիս հաշվի է առնվել պառլամենտարիզմի համաշխարհային փորձը: Հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունները, որոնք իրենց գործունեությամբ պետք է միս ու արյուն դառնային հայ իրականության մեջ առաջին անգամ ձևավորված խորհրդարանին, մինչ այդ արդեն անցել էին քաղաքական պայքարի որոշակի դպրոց:

- Ի սկզբանե ՀՀ-ն որդեգրեց կառավարման հանրապետական ձևը՝ խորհրդարանի գերակայությամբ: Պետական իշխանության գլխավոր մարմինը խորհրդարանն էր: Իշխանության գլխավոր իրավասությունները՝ օրենսդիր, մասամբ նաև գործադիր, կարգադրիչ ու դատական, պատկանում էին խորհրդարանին: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ձևավորվում ու հաստատվում էր խորհրդարանի կողմից: Հանրապետության նախագահի պաշտոնի բացակայության պայմաններում երկրի թիվ մեկ պաշտոնատար անձը համարվում էր կառավարության նախագահ-նախարարը՝ վարչապետը, որն ընտրվում էր խորհրդարանի կողմից, հաշվետու էր նրա առջև, և վերջինիս վստահություն կամ անվստահություն հայտնելու խնդիրը դարձյալ լուծում էր խորհրդարանը:

- Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել ՀՀ խորհրդարանական կառավարման երեք փուլ: Առաջին փուլում բավականին մեծ են եղել խորհրդարանի իրավասության շրջանակները, սակայն ժամանակի ընթացքում դեպքերի ու հանգամանքների բերումով, սահմանադրության բացակայության, իշխանության թևերի ոչ հստակ տարանջատվածության, ինչպես նաև սուբյեկտիվ պատճառներով կառավարությունն իր հերթին գերազանցեց սեփական իրավասության սահմանները, ժամանակ առ ժամանակ խորհրդարանն ուղարկելով արձակուրդ և ստանձնելով նաև օրենսդրական գործառույթներ: Անշուշտ, գործադիր մարմնի կողմից օրենսդիր մարմնի իրավունքների յուրացումը անհարիր էր իրավական-ժողովրդավարական պետական համակարգին:

- Եթե Հ. Քաջագնուհու վարչապետության շրջանում պետական իշխանության գլխավոր օղակը խորհրդարանն էր, որն առանցքային դեր էր խաղում երկրի քաղաքական կյանքում, ապա մի փոքր ավելի ուշ՝ Ալ. Խատիս-



յանի վարչապետության ժամանակաշրջանում, խորհրդարանն ու կառավարությունը այսպես թե այնպես հավասարակշռում ու հակակշռում էին մեկը մյուսին: Իսկ Հ. Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարության ժամանակ, հանգամանքների աննպաստ թելադրանքով, խորհրդարանն ամիսներ շարունակ ուղարկվեց հարկադիր արձակուրդի և գործակալնում դիմազրկվեց: Սակայն կարծում ենք, որ խորհրդարանի դիմազրկման հանգամանքը չի կարելի բացատրել ՀՅԴ մենիշխանական ձգտումներով: ՀՅԴ-ն խորհրդարանը դիմազրկելու կարիք չունեի այն պարզ պատճառով, որ վերջինիս կազմի 90 տոկոսը ներկայացնում էին իր անդամները: ՀՅԴ-ն և ՀՀ կառավարության վարիչները նման քայլի դիմեցին, առաջին հերթին, Հայաստանի Հանրապետության գլխին կախված արտաքին ու ներքին մահացու սպառնալիքներից դրդված: Դրա համար էլ նրանք գտան, որ տվյալ փուլում խորհրդարան գումարելու ժամանակը չէ, և կարծում ենք՝ սխալվեցին, որովհետև դրանով էսպես թուլացրին ժողովրդական ներկայացուցչությանը ձևավորված քաղաքացիական իշխանության հիմքերը, ինչն, անշուշտ, պետք է դասել հանրապետության անկման ակտիվին:

- Բայց դա չէր ՀՀ անկման գլխավոր պատճառը: Նրա կործանման պատճառները դրսում խնդրված արտաքին մահացու ուժերն էին՝ քեմալական Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը, որոնց հարվածներից էլ խորտակվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը, և նրա տարածքները բաժանվեցին Թուրքիայի ու Ռուսաստանի միջև:

- ՀՀ կարճատև պառլամենտական կառավարման պատմական փորձը, իր թերություններով ու բացթողումներով հանդերձ, ցույց է տալիս, որ Հայաստանն ու հայ ժողովուրդը համաշխարհային պատմության հողովույթի և եվրոպական առաջադեմ քաղաքական ու հոգևոր արժեհամակարգի անքակտելի մասն են հանդիսանում:

- Համաշխարհային պատմության փորձը վկայում է, որ ուժեղ և կենսունակ պետություն ստեղծելու համար նրա հիմքում պետք է դնել ոչ թե ուժեղ **իշխանություն**, այլ ուժեղ **հասարակություն** ունենալու գաղափար-սկզբունքը: Ակներև է, որ հենց ուժեղ հասարակությունն է ուժեղ ու կենսունակ պետության երաշխիքը:

## Summary

### PARLIAMENTARY GOVERNMENT EXPERIENCE OF THE FIRST REPUBLIC

Ararat M. Hakobyan

**Key words** – Constitution, Parliament, Sh. Shahamiryan, government, party, opposition, Democratic Republic, H. Kajaznuni, A. Sahakyan, agenda, Armenian assembly, proportional voting system, legislative and executive authorities, Bureau of the Board.

The idea of parliamentarianism has deep roots in Armenia, since the 18th

century, when on the initiative of Sh. Shahamiryan and his party in Madras the work “Trap of ambition” was made up that is estimated as constitution. However, the parliamentary system of government was first implemented during the First Republic of Armenia.

RA parliamentary history can be divided into three stages. The first stage covers the period of the first convocation of the Board of Armenia from August 1, 1918 until the end of April in 1919, when the Parliament was the supreme organ of state power and its jurisdiction included not only legislative, but also part of the executive, administrative and even judicial functions. In the absence of the constitution and the presidency, the prime minister was considered to be the first official figure who, together with his cabinet, was elected by parliament and thus was accountable to the parliament and the latter could express trust or distrust with respect to the Prime Minister.

Armenian assembly was made of four political parties and none of them, including the ARF Dashkaksutyun, formed a stable majority. This period can be regarded as democratic due to the formation of a coalition in the government (ARF and ADP), which ensured a stable majority for the smooth management of the country.

The 2nd stage of the parliamentary government of Armenia covers the second half of 1919 (from August 1) to May 5, 1920. At this stage, parliament and government were balancing each other. The overwhelming majority of the seats in the newly elected parliament belonged to the ARF Dashnaksutyun (72 seats out of 80), and in these circumstances, the government again was elected by Parliament and was accountable to it. The ruling party ARF was a link between the government and the ARF Bureau.

The situation changed dramatically during the third stage (May–November 1920). After external and internal threats hovered over the republic (the May speech of Bolsheviks in 1920, the escalation of Turkish–Tatar disorders, the ultimatum of the Revolutionary Committee of Azerbaijan to Armenia, etc.), ARF Bureau had to take control of the country with all the staff (7 members and 3 candidates for membership of the party), while the Parliament was sent on forced leave for several months. It is quite difficult to speak of a parliamentary system of government at this stage.

Nevertheless, though during its short political life the First Republic (2.5 years) bore unusually difficult conditions, both external and internal threats, the lack of a constitution, as well as the lack of management experience and weak opposition and could not properly introduce the idea of parliamentarianism, one can be sure that during the Third Republic these ideas are going to be finally materialized and implemented.

## ОПЫТ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Арарат М. Акопян

**Ключевые слова** – Конституция, парламент, Ш. Шаамирян, правительство, партия, оппозиция, Демократическая Республика, А. Каджазнуни, А. Саакян, повестка дня, Совет Армении, пропорциональная избирательная система голосования, законодательная и исполнительная власть, Бюро–правительство.

Идея парламентаризма имеет глубокие корни в армянской действительности, начиная с 18-го века, когда в Мадрасе по инициативе Ш. Шаамиряна и его кружка был составлен труд “Западня честолюбия”. Тем не менее, парламентская система государственного правления была впервые применена во времена Первой Республики Армении.

Историю парламентаризма РА можно разделить на три этапа. 1-й этап охватывает период созыва Совета Армении с 1 августа 1918 года до конца апреля 1919 года, когда парламент являлся высшим органом государственной власти, юрисдикция которого включала в себя не только законодательные, но и часть исполнительных, административных и даже судебных функций. В условиях отсутствия конституции и президентского поста первым официальным лицом считался премьер–министр, который вместе со своим кабинетом избирался парламентом, был подотчетен ему, а парламент мог выражать доверие или недоверие премьер–министру.

В Совете Армении действовали четыре партийные фракции, но ни одна из них, в том числе АРФ Дашнакцутюн не составляли стабильное большинство. В этом период проявлением демократический можно считать формирование коалиционного правительства (АРФ и АДП), что обеспечило стабильное большинство для беспрепятственного управления страной.

2-й этап парламентского правления РА охватывает вторую половину 1919-го года (с 1-го августа) до 5-го мая 1920 года. На этом этапе, так или иначе парламент и правительство уравнивали друг друга. В новоизбранном парламенте подавляющее большинство мест принадлежало АРФ Дашнакцутюн (72 места из 80), и в данных условиях правительство избирался парламентом и было ему подотчетн. Парламентская фракция АРФ Дашнакцутюн была связующим звеном между правительством и Бюро АРФ.

На третьем этапе (май–ноябрь, 1920), ситуация кардинально поменялась. После того как над республикой нависли внешние и внутренние угрозы (майское выступление большевиков в 1920 году, эскалация турецко–татарских беспорядков, ультиматум ревкома Азербайджана и т.д.), Бюро АРФ Дашнакцутюн было вынуждено всем составом (7 членов и 3 кандидата в члены) принять управление страной, в то время как парламент был отправлен в вынужденный отпуск на несколько месяцев. На этом этапе трудно говорить о парламентской системе правления.

Тем не менее, несмотря на то, что при недолгой политической жизни Первой Республики (2,5 лет), на долю которой пришлось необычайно трудные условия (внешние и внутренние угрозы, отсутствие конституции, отсутствие опыта управления и слабая оппозиция) из за чего не удалось должным образом внедрить идеи парламентаризма, можно быть уверенным, что во времена Третьей Республики они будут реализованы в практической жизни.